

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն - 11

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 11-Ի ՆԻՍՏԻ

*ՆԱԽԱԳԱՀՈՒՄ ԷՐ՝ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԸ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ ԷՐ՝ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ*

Ավագանու 27 անդամներից նիստին մասնակցում էին՝ Թ. Շահվերդյանը, Շ. Վահանյանը, Ա. Մարկոսյանը, Մ. Մաթևոսյանը, Գ. Արշակյանը, Ա. Դատումյանը, Տ. Հակոբյանը, Ռ. Տոնոյանը, Տ. Գալստյանը, Գ. Թադևոսյանը, Բ. Հարությունյանը, Ն. Արսենյանը, Մ. Մկրտչյանը, Ն. Անդրեասյանը, Ս. Բադալյանը, Բ. Վարդանյանը, Գ. Սուքիասյանը:

Նիստին մասնակցում էին նաև համայնքի ղեկավարի տեղակալները, օգնական Ն. Գևորգյանը, մամուլի քարտուղար Ս. Ասիլյանը, համայնքի ղեկավարի խորհրդական Հ. Բաղդասարյանը, աշխատակազմի բաժինների պետերի պաշտոնակատարներ:

Համայնքի ղեկավարի առաջարկությամբ, հաշվի առնելով հարցի հրատապությունը, նիստի օրակարգում ընդգրկվեցին նաև ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Սաղմոսավան և Փարպի բնակավայրերում հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին և Հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին հարցերը:

1. Հաստատվում է նիստի հետևյալ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ը

2. ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Սաղմոսավան և Փարպի բնակավայրերում հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին:

/Ձեկուցող՝ Հ. Բաղդասարյան/

3. Հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

/Ձեկուցող՝ Հ. Բաղդասարյան/

4. Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու 01.02.2022թ. N 9-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

5. Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու 24.12.2021թ. N 10-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

6. Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի բնակավայրերի ավագանու նախկինում ընդունված որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

7. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական տեխնիկական վարձակալությամբ տրամադրելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

8. Համայնքային սեփականություն հանդիսացող խողովակները ոռոգման ցանցի արդիականացման համար օգտագործելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

9. Համայնքային սեփականություն հանդիսացող Նոր Եղեսիա գյուղի ոռոգման ցանցի խողովակների մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

10. Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի կամավոր խնդիրների, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունների և դրանց լուծման իրականացման կարգը սահմանելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

11. ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Սաղմոսավան և Օշական բնակավայրերում հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Թումասյան/

12. Հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Թումասյան/

13. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը ուղղակի վաճառքով օտարելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Թումասյան/

14. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն համարվող հողամասը կառուցապատման իրավունքով /մրցույթով/ տրամադրելու թույլտվություն տալու մասին:

/Զեկուցող՝ Ս. Թումասյան/

15. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին:

/Զեկուցող՝ Ս. Թումասյան/

16. Հողամասերի փոխանակություն կատարելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Թումասյան/

17. ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը Հյուսիս-Հարավ ներդրումային ծրագիր-ծրագիր 2-ի շրջանակներում հանրության գերակա շահերի ապահովման նպատակով Հայաստանի Հանրապետությանը ուղղակի վաճառքով օտարելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Թումասյան/

18. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին:

/Զեկուցող՝ Ս. Թումասյան/

19. Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու երկրորդ նստաշրջանի հինգերորդ նիստի օրը սահմանելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

17 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Յ Ի Ն - 2 - ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Սաղմոսավան և Փարպի բնակավայրերում հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակ համայնքի ղեկավարի խորհրդական Հարություն Բաղդասարյանը և առաջարկեց հաստատել Աշտարակ համայնքի Սաղմոսավան և Փարպի բնակավայրերում հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունը:
Հ. Բաղդասարյանը նշեց, որ որոշման նախագծի ընդունման դեպքում Աշտարակ համայնքի բյուջե կվճարվի մոտ 25 մլն ՀՀ դրամ:

Հարցի շուրջ լրացուցիչ պարզաբանումներ ներկայացրեց նաև համայնքի ղեկավար Թովմաս Շահվերդյանը:

17 - ԿՈՐԱ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 3 - Հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակ համայնքի ղեկավարի խորհրդական Հարություն Բաղդասարյանը և առաջարկեց հավանություն տալ քաղաքացուն սեփականության իրավունքով պատկանող թվով 5 գյուղատնտեսական նշանակության հողամասերի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի նշանակության՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության փոփոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Բարձրացված հարցերին համայնքի ղեկավարի և զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

17 - ԿՈՐԱ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 4 - Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու 01.02.2022թ. N 9-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

Հարցը ներկայացրեց աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, Աշտարակ համայնքի ավագանու 01.02.2022թ. N 9-Ա որոշման հավելված 2-ը շարադրել նոր խմբագրությամբ:

Զեկուցողը նշեց, որ սույն որոշման նախագծով առաջարկվում է փոփոխություններ և լրացումներ կատարել <<Աշտարակի խմելու ջրի մատակարարման և սպասարկման>> համայնքային հիմնարկի հաստիքացուցակում:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

17 - ԿՈՐԱ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 5 - Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու 24.12.2021թ. N 10-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>>

ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, Աշտարակ համայնքի ավագանու 24.12.2021թ. N 10-Ա որոշման հավելված 2-ի մեջ կատարել փոփոխություններ և լրացումներ:

Զեկուցողը նշեց, որ նշված որոշման նախագծով առաջարկվում է սահմանել <<տեղեկատվական տեխնոլոգիաների պատասխանատուի>> հաստիք, ինչպես նաև հաշվի առնելով, որ կատարված ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Աշտարակ համայնքի Օրգով գյուղի բնակչությունը հասնում է 521-ի, ուստի առաջարկվում է 500-1500 հոգի մարդ ունեցող բնակավայրերի թիվը ավելացնել, ինչպես նաև սահմանել օպերատորի հաստիք:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

17 - ԿՈՐՄ ԶԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 6 - Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի բնակավայրերի ավագանու նախկինում ընդունված որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին

Հարցը ներկայացրեց համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և 102-րդ հոդվածի 4-րդ կետերի պահանջներով, ուժը կորցրած ճանաչել Աշտարակ համայնքի բնակավայրերի ավագանու նախկինում ընդունված որոշումները: Ս. Սահակյանը նշեց, որ նշված որոշման արդյունքում հավասար պայմաններ կստեղծվեն սոցիալական տարբեր խմբերին աջակցություն տրամադրելու համար:

Հարցի շուրջ լրացուցիչ պարզաբանումներ ներկայացրեց նաև համայնքի ղեկավար Թովմաս Շահվերդյանը:

Բարձրացված հարցերին համայնքի ղեկավարի և զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

17 - ԿՈՐՄ ԶԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 7 - Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական տեխնիկական վարձակալությամբ տրամադրելու մասին

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>

օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 102-րդ հոդվածի 4-րդ կետերի պահանջներով, հիմք ընդունելով քաղաքացու դիմումը, առաջարկեց ՀՀ Արագածոտն մարզի Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական տեխնիկան՝ անիվավոր տրակտոր <<Բելառուս 82.1>> խոտի հավաքիչ հակավորիչ ТУКАН -1600, այգեգործական թունաքիմիկատների սրսկիչ /ԱԳՊ/, եռախոփ գուլթան ՊՆՎ 3-35, տրամադրել վարձակալությամբ տարեկան 600 000 /վեց հարյուր հազար/ ՀՀ դրամ գումարով և 1 տարի ժամկետով:

Հարցի շուրջ լրացուցիչ պարզաբանումներ ներկայացրեց նաև համայնքի ղեկավար Թովմաս Շահվերդյանը:

Բարձրացված հարցերին համայնքի ղեկավարի և զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

17 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 8 - Համայնքային սեփականություն հանդիսացող խողովակները ոռոգման ցանցի արդիականացման համար օգտագործելու մասին

Հարցը ներկայացրեց աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 184-րդ հոդվածի 3-րդ կետի և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետի պահանջներով, համաձայնություն տալ Աշտարակ համայնքի վարչական տարածքում գտնվող տիրագուրկ խողովակները ճանաչել համայնքային սեփականություն: Միաժամանակ, սույն որոշման նախագծով հնարավորություն է տրվում Աշտարակ համայնքի բնակավայրերի վարչական ղեկավարներին, ըստ անհրաժեշտության համայնքի ղեկավարի համաձայնությամբ 1-ին կետով սահմանված խողովակներն անխափան աշխատանքի նպատակով օգտագործել ներցանցային համակարգի արդիականացման համար:

Հարցի շուրջ լրացուցիչ պարզաբանումներ ներկայացրեց նաև համայնքի ղեկավար Թովմաս Շահվերդյանը:

Բարձրացված հարցերին համայնքի ղեկավարի և զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

17 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 9 - Համայնքային սեփականություն հանդիսացող Նոր Եղեսիա գյուղի ոռոգման ցանցի խողովակների մասին

Ձեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետի պահանջներով, համայնքային սեփականություն հանդիսացող Նոր Եղեսիա գյուղի ներտնտեսային ոռոգման ցանցի 400մմ տրամագծով 28զժմ խողովակն անհատույց տրամադրել <<Արագածոտն>> ՋՕԸ-ին, ինչպես նաև համայնքային սեփականություն հանդիսացող 400մմ խողովակներից 12զժմ-ն օգտագործել խոշոր եղջերավոր անասունների համար խմոց պատրաստելու նպատակով:

Բարձրացված հարցերին համայնքի ղեկավարի և զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

17 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 10 - Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի կամավոր խնդիրների, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունների և դրանց լուծման իրականացման կարգը սահմանելու մասին

Հարցը ներկայացրեց աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 10-րդ հոդվածի և 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի պահանջներով, սահմանել Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման իրականացման կարգը՝ համաձայն հավելվածի, միաժամանակ սահմանել, որ սույն որոշումից բխող հետագա իրավական ակտերի ընդունումը վերապահվում է Աշտարակ համայնքի ղեկավարին:

Բարձրացված հարցերին համայնքի ղեկավարի և զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

17 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Յ Ի Ն - 11 - ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Սաղմոսավան և Օշական բնակավայրերում հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի պաշտոնակատար Ս. Թումասյանը և առաջարկեց, հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001թ. օգոստոսի 13-ի N 599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 22.11.2021թ. N239 և 17.01.2022թ. N6 դրական եզրակացությունները և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի և ՀՀ կառավարության N 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 17-րդ կետի պահանջներով, հաստատել ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Սաղմոսավան և Օշական բնակավայրերում հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունները:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

17 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Յ Ի Ն - 12 - Հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի պաշտոնակատար Ս. Թումասյանը և առաջարկեց, հիմք ընդունելով ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմումները, համաձայնություն տալ համայնքի վարչական տարածքում գտնվող մի շարք հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունը փոփոխել:

Զեկուցողը նշեց, որ փոփոխության դեպքում նրանք պարտավոր են վճարելու կադաստրային արժեքների տարբերությունը:

Հարցի շուրջ լրացուցիչ պարզաբանումներ ներկայացրեց համայնքի ղեկավար Թովմաս Շահվերդյանը:

Բարձրացված հարցերին համայնքի ղեկավարի և զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

17 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 13 - Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը ուղղակի վաճառքով օտարելու մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի պաշտոնակատար Ս. Թումասյանը և առաջարկեց, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66 հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 26.05.2016թ. N 550-Ն որոշման, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 21 կետի պահանջներով, հիմք ընդունելով իրավաբանական և ֆիզիկական անձանց դիմումները, ուղղակի վաճառքով օտարել Աշտարակ համայնքի բնակավայրերում առկա հողատարածքները:

Հարցի շուրջ լրացուցիչ պարզաբանումներ ներկայացրեց համայնքի ղեկավար Թովմաս Շահվերդյանը:

Բարձրացված հարցերին համայնքի ղեկավարի և զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

17 - ԿՈՐՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 14 - Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն համարվող հողամասը կառուցապատման իրավունքով /մրցույթով/ տրամադրելու թույլտվություն տալու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի պաշտոնակատար Ս. Թումասյանը և առաջարկեց, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48¹, 76-80 հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. N 286 որոշման 46.2 կետի դրույթներով, Աշտարակ համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, համաձայնություն տալ պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը կառուցապատման իրավունքով /մրցույթ/ տրամադրելուն և հաստատել տարեկան վճարի մեկնարկային գին՝ համաձայն հավելված 1-ի:

Հարցի շուրջ լրացուցիչ պարզաբանումներ ներկայացրեց համայնքի ղեկավար Թովմաս Շահվերդյանը:

Բարձրացված հարցերին համայնքի ղեկավարի և զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

17 - ԿՈՐԱ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 15 - Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի պաշտոնակատար Ս. Թումասյանը և առաջարկեց, հիմք ընդունելով քաղաքացու դիմումը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48¹ հոդվածի, ՀՀ կառավարության 12.04.2001թ. N286 որոշմամբ հաստատված կարգի 46.2 կետի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1 կետի 21-րդ ենթակետի դրույթներով, թույլատրել Աշտարակ քաղաքի Պ. Պոռոջյան փողոց, N 13/11 հասցեում գտնվող, 02-001-0178-0011 ծածկագրից 17,8քմ բնակավայրերի նշանակության ընդհանուր օգտագործման հողամասը ավտոտնակ կառուցելու համար կառուցապատման իրավունքով /առանց մրցույթի/ քաղաքացուն տրամադրելու 25 տարի ժամկետով՝ տարեկան 17800 /տասնյոթ հազար ութ հարյուր/ ՀՀ դրամ վճարով:

Բարձրացված հարցերին համայնքի ղեկավարի և զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

17 - ԿՈՐԱ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 16 - Հողամասերի փոխանակություն կատարելու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի պաշտոնակատար Ս. Թումասյանը և առաջարկեց, հիմք ընդունելով Հովհաննես Մանուկյանի 01.04.2022թ. N1311 դիմումը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 21 կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 71 հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. N286 որոշման պահանջներով, Աշտարակ

քաղաքի <<Վառոյի ձորակ>>, 5-րդ թաղամաս, N 139 հասցեում գտնվող /ծածկագիր՝ 02-001-0239-0083/, Հովհաննես Մանուկի Մանուկյանին սեփականության իրավունքով պատկանող 590քմ տնամերձ հողամասը փոխանակել համայնքային սեփականություն հանդիսացող, 02-001-0401-0024 ծածկագրով, <<Արա-2>> թաղամաս, 2-րդ փողոց, N 2/1 հասցեում գտնվող 590քմ բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասի հետ:

Բարձրացված հարցերին համայնքի ղեկավարի և զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

17 - ԿՈՂՄ ԶԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 17 - ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը Հյուսիս-Հարավ ներդրումային ծրագիր-ծրագիր 2-ի շրջանակներում հանրության գերակա շահերի ապահովման նպատակով Հայաստանի Հանրապետությանը ուղղակի վաճառքով օտարելու մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի պաշտոնակատար Ս. Թումայանը և առաջարկեց, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 66-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 21-րդ ենթակետով, հիմք ընդունելով <<Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 16-ի թիվ 1274-Ն որոշմամբ հաստատված <<Հողերի օտարման և տարաբնակեցման շրջանակը և դրա փոխհատուցման սկզբունքները>> վերտառությամբ N 1 և N 2 հավելվածի պահանջները, համաձայնություն տալ Աշտարակ համայնքի սեփականություն հանդիսացող, հանրության գերակա շահ ճանաչված ներքոհիշյալ հողամասերն առաջարկված փոխհատուցման գումարներով օտարել Հայաստանի Հանրապետությանը:

Բարձրացված հարցերին համայնքի ղեկավարի և զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

17 - ԿՈՂՄ ԶԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Յ Ի Ն - 18 - Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին

Հարցը ներկայացրեց աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի պաշտոնակատար Ս. Թումասյանը և առաջարկեց, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-70 հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. N 286 որոշման և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի, էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների և արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նշանակության հողամասերը աճուրդ-վաճառքի միջոցով օտարել և հաստատել մեկնարկային գին՝ համաձայն հավելված 1-ի: Միաժամանակ, համայնքային սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության որոշ հողամասեր աճուրդ - վաճառքով օտարել, տրամադրել վարձակալության իրավունքով և հաստատել մեկնարկային գին՝ համաձայն հավելված 2-ի:

Բարձրացված հարցերին համայնքի ղեկավարի և զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

17 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Յ Ի Ն - 19 - Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու երկրորդ նստաշրջանի հինգերորդ նիստի օրը սահմանելու մասին

Զեկուցումով հանդես եկավ համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու երկրորդ նստաշրջանի հինգերորդ նիստի օրը և ժամը սահմանել 2022 թվականի հունիսի 10-ը, ժամը 17:00-ին:

Նիստը կազմակերպել Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու նստավայրում, հասցեն՝ ք. Աշտարակ, Ն. Աշտարակեցու հր. 7:

17 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Օրակարգի հարցերը սպառված են:

Ավագանին աշխատանքներն ավարտեց 2022 թվականի մայիսի 11-ին:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

- ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ _____
- ՇԱՆԹ ՎԱՀԱՆՅԱՆ _____
- ԱՐՄԵՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ _____
- ՄԵՐԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ _____
- ԳՈՌ ԱՐՇԱԿՅԱՆ _____
- ԱԼԲԵՐՏ ԴԱՏՈՒՄՅԱՆ _____
- ՏԱՐՈՆ ՀԱԿՈԲՅԱՆ _____
- ՌՈՒԶԱՆԵԱ ՏՈՆՈՅԱՆ _____
- ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ _____
- ԳԱԼՈՒՍՏ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ _____
- ԲԱՎԱԿԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____
- ՆԱԶԵԼԻ ԱՐՄԵՆՅԱՆ _____
- ՄԻՇԱ ՄԿՐՏՉՅԱՆ _____
- ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ _____
- ՍՈՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ _____
- ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ _____
- ԳՆԵԼ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ